

## ԱԻԵՏԱՐԱՆԻ ԵՂԲԱՑՐՆԵՐԸ<sup>\*)</sup>

### VIII

Գոդա-Սարը ամբողջովին ընկղմուած էր միժաշաղ խաւարի գրկում։ Նրա բազմամարդ հովիտներում վազնց, շատ վաղնց տիրում էր գերեզմանական լոռութիւն։ Գիշերն իր այդ ահաւոր լոռութեամբ և խաւարի խորհրդաւոր մժութեամբ մի չարագուշակ սարսուռ էր տարածում այդ սարի շրջակայքում։ Այսպիսի բօպէներում ողջ բնութիւնն էլ ասես շնչում է ծանրատաղ-տուկ խորհրդաւորութեամբ, և որքան խաւարը թանձր է լինում և նոռ թեսերի ներքոյ հանգչող վայրերը ամայի, այնքան էլ տիեզերքի ահաւորութիւնը ցնցող և սրտաւմաշ է դառնում։ Խաւարի լեզուն այսպիսի բօպէներում առաւել ևս պերճախօս է դառնում, քան բնութեան հազար ու մի հրաշալիքների լեզուն։

Այդ ընդհանուր լոռութեան մէջ Գոդա-Սարի լանջերում սփռուած քրդական բազմազան վրաններից մէկում, որն իր փարթօւմ արդու զարդով և խոշոր տեսքով նոյն իսկ գիշերուայ այդ պահուն պարզ աչքի էր զարկում, նստել էր մի միջին տարիքաւոր մարդ։ Նրա դէմքը այդ բօպէին կրում էր իր վրայ ոգեսորութեան խռովայոյզ այն արտայայտութիւնը, որը իւրաքանչիւր անդամ, երբ նա խօսում էր, սփռում էր իր շուրջը և խորին համոզ-մունք և՛ դառն ապաշաւանք, և՛ վիշտ, և՛ տառապանք։

\*) Տես «Լումայ» № 4.

Այսպէս էր այդ մարդը, որը իր հոգեկան յաճախակի փոփոխակի և ողեղորիչ արտայայտութեամբ աւելի էր ազգում իրան շրջապատողների վրայ, քան իր խօսքով ու լեզուով:

Այն, լինում են ըոպէներ, երբ հոգեկան այս ու այն անկեղծ արտայայտութիւնը տռաւել ներգործող ոյժ է պարփակում իր մէջ, քան հազարաւոր շատախօս լեզուներ, որոնք երբեմն փոխանակ տչըը շինելու, յոնքն էլ են կործանում:

Նրան շրջապատողները ոտքից գլուխ լսելիք դարձած, խորին ուշադրութեամբ ականջ էին դնում նրան և անընդհատ ծխում իրանց երկարավիղ դէլլանները և ամեն անդամ, երբ նրանց խօսակիցը մի փաստալից, մի համոզեցուցիչ բան էր ասում, նրանք դրեթէ միաբերան կրկնում էին «արէ», Վոլլա»: Ըստ երեսոյթին նրանց հեղինակաւոր խօսակիցը վաղուց էր ըմբռնել, որ խաւարամիտ և մոլեգնեալ ամբոխի հետ զէնքի կոռուի փոխարէն անհրաժեշտ է վարել լեզուի, խօսքի և համոզմունքի կորիւ: Նա գիտէր, նրա խորաթափանց ոգին վաղուց էր ըմբռնել, որ արիւնայեղ կուիւը այնքան էլ հզօր կերպարանափոխութիւն անկարող է առաջ բերել այդ վայրենի ցեղերի ուղեղի վրայ. նա գիտէր, որ այդ կորիւը կարող է ժամանակաւորապէս խլացնել նրանց արիւնուցտ կրկերը, սակայն վաղը, միւս օրը, երբ դու անկարող կլինիս զէնքով խօսելու նրանց հետ, նրանք դարձեալ ոտքի կանգնեն իրանց բնածին աղեխարշ կրկերով: Եւ այն ժամանակ դարձեալ ջուրը իր ճանպան է գտնելու: Այդ իսկ պատճառով նա իր հզօր, իր ահեղ գոյներով կուլտարական կորիւ էր սկսել քրդերի հետ և քանի տարի էր, ինչ նա անմռունչ հոգատարութեամբ առաջ էր տանում նրան բնութեան ծոցում, քրդական վրանների տակին: Եւ նա աւելի քան ուրախ էր, որ իր այդ վեհ գաղափարները արգասաւոր արմատներ էին գցել իրան ունկնդիրների արտերում, որոնք օրէցօր

աճում էին, զարդանում և արդիւնաւէտ ապագայ խոս-  
տանում:

Վերջապէս, տան տէրը, որ մի պատկառանքով  
բուրդ էր, դարձաւ դէպի իր խօսակիցը մի այնպիսի  
ձայնով, որ արտայայտում էր և՛ սէր, և՛ համակրանք  
դէպի նրան:

—Սահրատ, ինչ որ պատմում ես, ճիշտ է. և թող  
իմ աղդայինները լսեն ու սթափուեն, որ մենք իրօք  
կոյր գործիք ենք եղել այն արիւնխում դազանի  
ճանկերում:

—Շէյխ-Ասլան, Սահրատն իր ամբողջ էռութեամբ  
մարմնացած անկեղծութիւն է, նա չի կարող չնչել անա-  
րատ զգացմունքներով, երբ մեր եղբայրական վեհ գաղա-  
փարի իրագործման շաւիլն է ընդգծւում, որ շնորհիւ մեր  
արիւն ու ծուծը մաշող ախոյեանների այս վերջին ժամա-  
նակներում պատած էր փուշ ու տատասկով: Մեզ՝  
դարաւոր եղբայրներիս ու հարեւաններիս համար,  
անհրաժեշտ է ձեռք-ձեռքի տուած՝ համերաշխ ոյժերով  
արմատախիլ անել այդ չարագուշակ փուշ ու տատասկ-  
ները, և այդպէս մաքրել մեր այն ուղին, որ տանում  
է, որ առաջնորդում է մեզ դէպի աղդերի երջանկու-  
թեան բարդաւաճումը: Եւ որքան շուտ, այնքան լաւ:  
Առանց դրան մենք մեր ձեռքով ինքներս փորում  
ենք մեր կործանման գերեզմանները: Ընդունայնախօսու-  
թիւն և ինքնագովութիւն չեն ասածներս:

—Վօսանա, Վօսան\*) — վրաբերեց Սլո—աղան, որը  
իր մի քանի ազդեցիկ մարդիկներով նոյնպէս այդտեղ  
էր և որի օրսն հեռու չէր Շէյխ-Ասլանի օբայից:

—Հալբաթ թի վօսանա, — նկատեց Շէյխ-Ասլանը, —  
ախր մենք ինչ վատութիւն ենք տեսել մեր հարեան  
ֆլաներից, որ երբ հեռուից մի դուդակ են ածում,  
մենք առանց մտածելու լսում ենք այդ դուդակի ձայ-

\*) Էդպէս է, էղպէս:

նին և խսկոյն, առանց աջ ու ձախ մտածելու, յետ ու առաջ դիտելու զինւում ենք և անմեղ մարդկանց արիւնը թափում։ Զէ, աղբեր, լաւ պիտի իմանանք, որ էսօր գրանց մասին են էդպէս գուղակ ածում, վաղը՝ մեր Եւ մերը աւելի հեշտ կլինի, բանի որ մենք հէյվանից բեթար ենք։

— Ճիշտ է ասում Շէյխը, — ասաց Սեփանիկը, որը մինչև այդ բոպէ լուռ նստած էր Սահրատի մօտին և որը իր վաճառականական գործերով յաճախ շրջում էր այդ օբանների մէջ։ — միթէ ձեր ամենից մեծը, Ռուտօնաղան, սուտ է ասում. չէ որ մարդը բսան տարուց աւելի է, ինչ ֆրանգների երկրումն է, ահա թէ նա ինչ է գրում ձեր մասին։ Այս ասելով նա մի ակնթարթում բաց արեց իր ճօթերի բեռները և նրանց բազմաթիւ ծալքերի միջից գուրս բերեց մի լրագրի օրինակ, ուր Ռուտօնաղան իր սուր, իր հզօր գրչով ճշտում էր Սահրատի ասածները և եղբայրական կոչ էր կարդում իւրայիններին, որ որքան կարելի է, որքան հնարաւոր է եղբայրաբար վարուեն իրանց հարեւան ֆլոների հետ։

Սեփանիկը սկսեց կարգալ այդ լրագիրը, և քրդերը երկար ուշադրութեամբ լսում էին նրան և անկեղծօրէն զզում էին իրանց տմարդի վարմունքի վրայ, որը անխղճօրէն գործ էին դրել իրանց հարեւան ֆլաների վրայ։ Վերջապէս, բոլորը միասին յուսահատուած կրկնեցին ճնահլամթ շէյթանայ։

— Հէնց այդ ճնահլամթ շէյթանային մասին եթէ խորը մտածէք, կղարմանաք, կյուսահատուէք, որ դուք որքան միամիտ էք եղել, և որքան տմարդի կերպով հեղնել, ծաղրել են ձեր զդացմունքները և ձեզ ոտքի կանգնացրել ձեր դարաւոր եղբայրների արիւնը խմելու և ձեզ կոյր գործիք են դարձրել «շէյթանների» ճանկերում, — նկատեց Սահրատը։

— Ա՛խ, երանի թէ մի բանի տարի առաջ մեզ հասկացնող լինէր ամեն բան. երանի շուտ մեր աջքերը

բացող լինէր,—վրայ բերեց Սլօ-աղան:

—Այսօր Աւդուման-աղան էլ պիտի ձեզ հետ լինէր. ինչո՞ւ չկայ, —հարցրեց Սահրատը:

—Նա մեզ խօսք տուեց՝ ինչ մենք գործ ենք, նա մեր ընկերն է. նրա «էլի» մարդիկը մեր համախոհները, —պատասխանեց Շէյլը:

—Ասում են, խօժոռուած է ինձ վրայ. ճիշտ է արդեօք, —հարցրեց Նորից Սահրատը:

—Ճիշտ է, առաջ մի փոքր խոժոռուած էր, բայց հիմի խելքի եկաւ: Նրան հազար ու մի վայր ի վերոյ բաներ էին պատմել քո և Խազալէի մասին, սակայն մենք համոզեցինք ուշադրութիւն չդարձնել այդպիսի ցնդաբանութիւնների վրայ, և նա լսեց մեզ, մանաւանդ, որ Խազալէին շուտով պիտի մարդու տայ: Ուսուաղայի լամուկը՝ Ըռղկօն «դէլ է<sup>1</sup>» տալիս (զառանցումէ) նրա համար, և Աւդուման-աղան խօստացել է կատարել այդ լամուկի փափագը:

—Ի՞նչպէս, Խազալէն էլ խօսք է տուել կատարելու հօր կամքը և այդ չարագործին կին դառնալու, —յուս սահատ ձայնով հարցրեց Սահրատը:

—Ասում են, տուել է, —պատասխանեցին ներկայ եղողներից շատերը:

—Ափսոս Խազալէն, —կրկնեց Սեփանիկը:

Այդ ժամին բոլորի ուշադրութիւնը դրաւեց մի ձայն, որը իր բարձրագոչ և լիահնչիւն ելեէջերով մի ինքնուրոյն թափով, թնդացնելով օդը, անցնում, գնում էր հեռու շատ հեռու և ամեն տեղ խանդարում էր տիրող գերեզմանային լռութիւնը: Ներկայ եղողները դադարեցին խօսելուց և սկսեցին ականջ գնել այդ ձայնին, որ քանի գնում էր, հեռանում էր: Եւ նրանք հազիւ կարօղացան ըմբռնել նրա այս մի քանի բառերը:

—1. Սուրս ժանդոտած՝      —3. Քեզ եմ աղերսում

էլ չեմ ես մորթում.

Ով մարալ-ջէյրան.

Թշնամին ցամքած՝

Քեզ պիտ պաղատեմ

Ել չէ հառաջում:    Ու լինիմ հէյրան:     
 — 2. Ես եմ հառաջում    — 4. Թէ դու ինձ սիրես,  
 Դառնութեամբ լցուած,    Սուրս կփայլի,  
 Բուն սիրոյ երկրում    Արիւն կվաղի,  
 Վշտերով խոցուած:    Ճամբայ կրացուի:

— Էռղկօն է, էլի սոված գայլի պէս գնում է  
 թափառելու Աւգուաման-աղայի օբայի կողմերը, — ասաց  
 Շէյխը:

Սահրատը ոչինչ չխօսեց, միայն նրա գունաթափ  
 գէմքը այդ ժամին արտայայտում էր և զայրոյթ, և  
 զզուանք, և նախանձ և անհուն վրէժխնդրութիւն: Նա  
 սորքի կանգնեց, հրաժեշտ տուեց բոլորին և դուրս  
 եկաւ վրանից, առարկելով, որ գնում է տեսնուելու  
 միւս օբաների մեծամեծների հետ:

## IX

Գօդա-Սարի լանջերում հանդարտ մշշում էր Աւ-  
 դուաման-աղայի օբան, ուր ձայն-ծպտուն վաղուց էր  
 դադարել: Տիրող աղջամուղ ջը գերեզմանական լուռ-  
 թեան հետ ասես խօսքերը մէկ արած՝ աւելի ահարկու  
 կերպարանք էին տալիս տիեզերքի այդ խորախորհուրդ  
 պահուն: Մերթ ընդ մերթ աղաներում նստոտած  
 ոչխարներն էին միայն իրանց անընդհատ որոճով խան-  
 դարում այդ ահաւոր բոպէն, որոնք, փնչալով և ամուր  
 սեղմելով իրանց գլուխները կրղքերին, դարձեալ շարու-  
 նակում էին իրանց անվերջ որոճը: Նրանցից ոչ հեռու,  
 պատի տակին, հովիւն էր իր շների հետ կծկուել ակու-  
 լապը գլխին:

Ամեն չար ու բարին յանձնելով իր հաւատարիմ  
 ընկերներին, նա իր անուշագիր նինջով առաւել ևս  
 խորհրդաւոր էր դարձնում այդ վայրկեանը: Շները,  
 թւում էր գիտէին այդ: Նրանք խորին ունկնդրու-  
 թեամբ ուշքի էին առնում այստեղ այնտեղ լսուող ա-

մեն թոյլ շշուկն անդամ և գլուխները բարձրացնում, սոքի կանգնում, ապա վերստին նստում էին հովուի կողքին, դրուխները մեկնելով առաջին թաթերի վրայ Յանկարծ այդ ժամին մօտակայ բլրակի ժայռաշատ կատարելից մի քանի անդամ ողբալի կրկնուեց մի ինչոր կատուի մլաւոց, Շները սոտքի թռան։ Սակայն շուտով վերադարձան, չդանելով իրանց անդորրութիւնը խանդարով այդ չարաճնի դաղանին։ Անցաւ մի քանի ըովէ։ Ամեն ինչ դարձեալ լուութեան գիրկն ընկաւ։ Այդ ժամին Աւդոաման-աղայի կանանց բաժնից գեցերային շրջիկ ոգիների նման խորին զգուշութեամբ դուրս եկաւ մի ստուեր։ Նա նոյնպիսի զգուշութեամբ և չափաւոր քայլերով անցաւ հովուի մօտով։ Շները ուշադրութիւն չդարձրին նրա վրայ։ Նա անցաւ նրանց մօտով և երբ դուրս եկաւ վրանների շարքերից, փութացրեց իր վատահելի քայլերը դէպի մօտակայ բլրակը։ Դեռ չհասած բլրակի կատարին, այնտեղ ընկած ժայռի ետևից դուրս թռաւ մի ուրիշը և հոգէզմայլ իդձերով բռնուած՝ վայրկենապէս իր գիրկն առաւ եկողին։ Վերջինս մի արտասովոր ցնցում զգաց իր ամբողջ մարմնով։ Երբէք նրան այդպէս լուութեամբ չէին գրկել։ Սակայն նու չկորցրեց իրան, այլ դառնալով դէպի իրան գրկողը նկատեց։

— Սահրատ, այդ ինչ է պատահել քեզ։ ոչ խօսում ես, ոչ էլ առաջուայ նման բաներ ես հարցնում ինձան-նից։

— Խաղալէ-ջանէ, դու Սահրատի մօտին չեմ. դու հոգգօի գրկումն ես, և այնտեղ էլ քո տեղը կլինի յաւիտեան։

— Բուկօի... շշածի նման ընդհատեց նրան Խաղալէն, աշխատելով դուրս պրծնել նրա գրկից։

— Էարէ, \*) հոգկօի,—ես վաղուց էի հետեւում

\*) Այս,

քո ու էն «այսպահն» \*) Փլայի (Սահրատի) արարա-  
մունքներին: Էսօր էլ ես եմ նրա գերը կատարում, որ  
զգուշոցնեմ քեզ:

Խաղալէն դուրս պրծաւ նրա գրկից և հարցրեց:  
— Ինչպէս զգուշացնես:

— Այն, որ դու վերջ տաս էդ ամօթաբեր վար-  
մունքիդ և լաւ հասկանաս, որ դու իմ հարմացուն  
ես: Ես սրանից յետոյ մէկ էլ էն շուն Փլային քեզ  
հետ տեսնելու լինեմ, ձեզ շան սատակ կանեմ, կամ  
կիսայտառակեմ ու նաղարազուռնայ կածեմ ձեր էտ  
արարքի մասին:

— Շատ մեծ խալաթ կանես, դու ով ես, ես զզւում  
եմ քեզանից:

— Հօրդ ականատես կանեմ քո խայտառակութիւն-  
ներիդ:

— Ինչ ուղում ես, արմ, բայց լաւ գիտցիր, որ հա-  
զար թիքայ կլինեմ և մէկը քեզ նման նամարդին դամաթ-  
չեմ անի:

— Զես անի:

— Զեմ անի երբէք, դու արժանի չես դրան:

— Իսկ էն շուն Փլան արժանի է:

— Նա, ինչպէս տղամարդ, ինչպէս իդիդ, մի հատիկ  
է, և քեզ նմանները նրա «զուլը» կլինին: Բացի այդ ես  
երբէք ուշքի չեմ առնում, որ նա Փլայ է: Մարդիկ նախ  
քան Փլայ, կուրմանջ, թուրք, ասորի լինելը՝ մարդ են,  
մի հօրից և մի մօրից սերուած: Իսկ զանազան ազգու-  
թիւնների բաժանումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդկու-  
թեան ցեղի գասակարգեր, որոնց իւրաքանչիւրի մէջ  
կան և կարող են լինել քեզ պէս լրբեր և Սահրատի  
պէս իդիդներ:

— Տօ, զիզէ, անզգամ, դու գլուխդ կորցրել ես:

— Ես գլուխս չեմ կորցրել. ես ուղիղն եմ ասում:

\*) Շանորդի:

Մահրատը երբէք քեզ պէս գաղտագողի չէր հետեւիլ ուրիշների այցելութիւններին և երբէք չէր ջանալ քո մողոնած զղուելի տեսութիւններով գրաւել խալսի աղջկների սրտերը. ես միամիտ չեմ: Միամիտներին կարող է զարմացնել քո այդ խաղը, իսկ ինձ ոչ. ես գարշանքով եմ նայում քո ստոր խաղերի վրայ:

— Տօ՛, անզգամ, լաւ է, վաս է իմ խաղը, ձեր հնարածն է:

— Մերն է, որին թելագրել են մեր սրտերը: Բայց դու, գարշելի կուռօ, ուղում ես գողանալ ուրիշի սիրտը: Դա յիմարութիւն է. աշխարհում ամեն բան կարելի է գողանալ, ամեն բան կարելի է խլել անհատից, բայց սիրտը՝ ոչ: Այնտեղ մարդկային ոչինչ չկայ: Ինչ որ Խուղէն բաշխել է իր ստեղծած մարդին, այնտեղ է նա ամփոփուած և նրա այս ու այն ուղղութիւնը, բռնած ընթացքը ունի մի ինքնուրոյն ոյժ, որը յաճախ չի ենթարկում անհատի կամքին: Ուրեմն դու, անխելք կուռօ, մի զարմացիր, որ մի քրդուհի անհօւն սիրոյ գերագոյն ջերմութեամբ սիրում է մի ֆլայի: Սրտում բուն դրած այս ու այն զգացմունքը այնպիսի ժամանակ անսսասան սառնասրտութեամբ խորտակում է նման պատնէշները և միանում է իր ընտրած, իր ֆայֆայած առարկայի հետ: Խեղճ Մահրատը առիթ չէ տուել. ես եմ գտել նրան. և ես առանց նրան ապրողը չեմ:

— Օ՛, մի քիչ էլ անցնի, դու քէշեցի էլ լաւ քարող կտաս:

— Կոյր, ես խալիֆայի մօտ եմ ուսել, և այդ դարձեալ նրա սիրոյ համար:

— Ուրեմն ես ոչինչ եմ:

— Իմ աշքում ոչնչից էլ ստոր:

Այս ասելով՝ Խազալէն ուզեց հեռանալ, սակայն նոր նկատեց, որ Ըուղդօն ամուր բռնել էր նրա ֆէշերից և թոյլ չէր տալիս:

— Ես քեզ էղպէս հեշտութեամբ չեմ թողնիլ, և,

Եթէ դու չզզջաս, գուցէ բոլորովին չթողնեմ: Դու ընկել ես իմ թակարդը, հեշտութեամբ չես պրծնիլ:

—Թռղ, ասում եմ, եթէ ոչ ստիպուած կլինեմ օգնութիւն գոչելու:

—Եթէ խելագարուած ես, գոչիր, ես ամեն բան կպատմեմ:

—Ստոր արարած, էդպիսով ես ուզում ինձ տիրանալ:

—Այո, և հէնց այս գիշեր, այս ըոպէիս, որից յեւաոյ դու կսթափուես:

Այս ասելով Ըոզգօն դաղանային հակումներով բըռնուած՝ գրկեց նրան և աշխատում էր գետին տապաւլել: Վայրենի կիրքը իր անսանձ կատաղութեամբ ուժգին բորբոքուել էր նրա մէջ և աշխատում էր, ինչ գընով էլ որ լինի, յագուրդ տալ իր կատաղութեանը: Այսպիսի ըոպէներին լուսմ է ինընազգացումը, լուսմ է կամքը, լուսմ է գիտակցութիւնը, և այդ բոլորը տեղի են տալիս մի վայրագ, մի մոլեգին, մի կատաղի կրակի, որը որբան խոչընդուներ է տեսնում իր շորջը, այնքան առաւել բորբոքում է և ահռելի չափեր ստանում, և միայն ոյժն է, որ հակառակ կողմից բաց է անում նրա գիտակցութեան աշբերը: Խակայն թշուառ Խաղալէն այնքան ոյժ չունէր գիմադրելու նրան: Նա հետզհետէ թուլանում էր և հազիւ էր կարողանում իւրան ոտքերի վրայ պահել ու մաքառել իր անողորմ ախոյեանի դէմ: Վերջապէս, ընութիւնը տարաւայագթանակը՝ աւելի թոյլը, գոյութեան կոուի այդ միշտ յաղթուած անբախտը, որ այդ ըոպէին Խաղալէն էր, գետին գլորուեց: Ծանր հառաջանքը թնդացրեց գիշերային այդ խորհրդաւոր լուսութիւնը, և մի ըոպէ ես, գուցէ այդ թշուառ զոհը կուլ գնար իր ախոյեանի գաղանային տոփանքով լի տենչանքին, բայց յանկարծ մի ուժեղ հարուած իջաւ Ըոզգօի գագաթին: հարուածը կրկնուեց, և ըոպէ առաջ բռնկուած կատաղի կրակը ընդմիշտ մարեց Ըոզգօի կրծքում:

Խաղալէն քրդուհիներին յատուկ ճարպկութեամբ ստիթ թուաւ և կամենում էր փախչել դէպի օրան, բայց իսկոյն նրան բռնեց իր փրկիչը, որը գառնութեամբ լցուած՝ զայրոյթի մի առանձնակի շեշտով հարցրեց.

— Բացատրութիւն եմ պահանջում, որից յետոյ քեզ էլ նրա հետ էն աշխարհը պիտի ուղարկեմ:

— Վրդովուելու կարիք չկայ, Սահրատ ջան, Խաղաւլէն հաւատարիմ է քեզ և հաւատարիմ էլ կմտնի գերեզման: Մենք լեռների զաւակներ ենք: Լեռները խոնարհուել, թերուել չգիտեն, նրանք միշտ ուղիղ են, միշտ ցցուած են պահում իրանց կատարները. նրանք օրօրուիլ շգիտեն քամինեղի, փոթորիկների առաջ, բայց չպէտք ապարդիւն տանջուել, յուսահատուել, երբ նրանք ակամայ իրանց գլուխները թաղում են մշուշների մէջ. որպէսդի աւելի լաւ գնահատել կարողանան լրյսի, արեգակի արժէքը:

— Ոչինչ չեմ հասկանում. ուրեմն դու ակամայ ես այստեղ եկել:

— Իհարկէ:

— Ինչպէս:

— Ինչպէս... այդ ստորը հետամուտ է եղել մեր տեսութիւններին, իմացել է մեր ազդանշանը, որով և ինձ էսդիշեր էստեղ քերեց: Լսելով մեր սովորական ազդանշանի ձայնը, ես զգուշութեամբ այստեղ եմ աճապարում և փոխանակ քեզ տեսներու, սրա ճանկն եմ ընկնում: Բայց լաւ էր դու, իմ աննման, շուտ վրայ հասարա Այս ասելով, նա փարուեց Սահրատի պարանոցով և երախատագիտութեան գոհունակութեամբ լցուած՝ համբուրեց նրա երկու թուշը:

— Ահա, էս էլ քո նեղութեան փոխարէն. բայց ինչ անենք էս շան հետ:

— Խաղալէնջանէ, Սահրատը շատ է թաղել անիրաւութիւններ, կթաղէ և սրան:

ԼԵՒՈՆ ԽԱՆՉԱԴԻ

Հոմայ

(Կը շարունակուի)